# ՀՐԱՒԷՐ

(Նամակ խմբագրութեան)

—

Էջմիածին, 14 սեպտեմբերի

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Ամենայն Հայոց Հայրապետի բարեհաճ տնօրէնութեամբ՝ Էջմիածնի Կենտրոնական Յօբելեանական Յանձնաժողովս պատիւ ունի խնդրել ձեզ, որ հաճիք մասնակցել համազգային Մեծ Յօբելեանական հանդէսներին, որոնք տեղի պիտի ունենան Էջմիածնում տարուոյս հոկտեմբ. 12-ին, 13-ին և 14-ին։

Ներկայացուցիչ ուղարկելու դէպքում խնդրվում է նախօրօք յայտնել Յանձնաժողովիս։

Նախագահ Յօբել. Յանձնաժողովի՝

Գալուստ Տէր-Մկրտչեան

Անդամ-քարտուղար՝

Գէորգ վ. Չէօրէքչեան